ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

20.07.2011թ-ին Բերքանուշ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր համայնքի ղեկավար Մ.Հայրապետյանը , քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Համբարձումյանը :

Մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը , բուժկետի աշխատակիցները , համայնքի բնակիչները :

Լսեցին ՝ Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ղեկավար Մ. Հայրապետյանի հաշվետվությունը 2011 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց , որ 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում Բերքանուշ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները .

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 61 դիմում , ինչպես նաև բանավոր հարցումներ , որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ :
- Գյուղապետարանը բնակիչներին տվել է 310 տեղեկանք , ստացել 46 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ :
- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման , սահմանների ճշգրտման աշխատանքներ :
- Համայնքի համար ստացվել և բաժանվել է եգիպտացորենի սերմացու :
- 2011թ-ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են ՝

ա) հողի հարկ – 2614.5

բ) գույքահարկ – 1338.9

գ) տեղական տուրք – 283.5

դ) ոչ հարկային եկամուտ – 241.6 (վարձակալական)

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ - տնտեսական միջոցառումներ և ծրագրեր , որոնցից են՝

Created with nitroPDF professional
download the free trial online at nitropdf.com/professional

ա) համայնքում նշվել է մարտի 8-ը՝ կանանց միջազգային տոնը , մայիսի 9-ը՝ հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը , Հայաստանի Հանրապետության տոնը

բ) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1190.0 հազար դրամի ֆինանսական աջակցություն :

- Համայնքում իրականացվել է փողոցների անվանակոչման և շինությունների ցուցատախտակների ամրացման ծառայություն :

- 800.0 հազար դրամ է հատկացվել համայնքում դպրոցական դաստիրակությունը պատշաճ կազմակերպելու համար :

- Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման , ոռոգման ցանցի վերականգնման :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Created with nitroPDF professional
download the free trial online at nitropdf.com/professional